## 47. ԽԱՐԵՑԻ ԱԹԱԲԵԿ

Խարեցի Գյուրշիկենց Աթաբեկը պզտիկ վախտ շատ չար է էղնում, էնենց, որ սաղ գեղ, իրանց սաղ տունը բեզրում են էդոր ձեռքից։ Հերը շատ է համոզում, խրատում է, որ քիչ խելոք մնա։ Գեղացիք ամեն օր իրան վրեն գանգատ են գալում։ Ինչքան խրատում է, ինչքան ծեծում է իլլաճ ու ճար չի էղնում։ Աթաբեկն էլ տասն, տասնուհինգ տարեկան էղավ։ Հերը տեսնում է, որ էլ իլլաճ չկա, ու գեղացիքն էլ ամեն օր գանգատ գանգտի վրա էին գալում, բրռնում տնից դուս է անում ու ասում է. «Գնա, ընձի պետք չէ քեզի պես տղեն»։ Իրանք էլ շատ աղքատ են էղնում։

Աթաբեկ հ'ելնում է Երևան հ'ուրտի ես, էկա։ Էրթում մի գեղ, մի հայի մոտ էղնում է մշակ։ Ջատկի օրերն է էղնում, հազողի ձողերն էլ բանում են արթըխ։

Աթաբեկն էլ էրթում է, աշխատում է ինչունի կեսօր։ Աղեն ըսում է.— Աթաբեկ, գնա՛, մեզի հաց բեր, ուտենք։

— Ես հ'էսոր նոր եմ էկեր, տուն ի՞նչ գիտեմ, որ էրթամ հաց բերեմ։

— Տուն որ չ'գիտես, մեր թազին առ հետդ ու իմ քուրքն էլ վրեդ առ, որ կնիկս հաց տա, բերես։ Թազին որ դուռը որ կայնավ, դու էն տունը կը մտնես։

Աթաբեկ քուրքն առնում է վրեն, թաղուն կանչում է, թազին

հ՚ընկնում է հ՚առաջ, դյուզ էրթում աղի դուռը։ Աթան ճամբուն քուրքը բռնում քցում է թաղու վրեն, դեղի մեջ որ մտնում է, շներ թոփ են էղնում թաղու վրեն, ու խեղդում են, քուրքն էլ կտոր-կտոր են անում։

Աղի կնիկը, որ տեսնում է քրքի օրը, ասում է մշկին,— Ա՜յ տղա, էս քուրքը յաղո՞ւզ էսենց պատռտվել է։

Աթան ասում է.— Ըշթը աղես ընձի ըսավ թե. «Գնա՛ տնից հաց բերա», ես էլ տուն չ՚գիտեի, աղես ըսավ. «Թաղին հետդ տար, էն դյուզ մեր տուն կէրթա, քուրքն էլ վրեդ առ», ես էլ ճամբեն քուրքը քցեցի թաղու վրեն, շոգ էր, ես չէի կարա բերել, գեղի մեջ շներ թաղուն խեխդեցին, քուրքն էլ պատռտեցին։

Կնիկն ասում է.— Դե որ եղել եղել է, օնչինչ չի էղնի, դու առ հաց գնա, ես կ՚կարեմ։

Խելի հ՚ուշանում է, որ էրթում է, աղեն ըսում է.— Ա՜յ տղա, յաղո՞ւզ հ՚ուշացար։

— Թունդիրը չէր հ՚իշե, աղա ջան, էդոր համար հ՚ուշացա։

Էդենց մի քանի օր անցնում է, մի օր աղեն ըսում է.— Սաբախտան մեր գոլուկն ու դևեն տար հանդը, թող արծան։

Սաբախտան Աթաբեկ հ՚ելնում գոլուկն ու դևեն խառնում է հ՚առաջ, աղի կնկան ասում է.— Խանըմ ընձի հաց տուր։

— Հաց աստուծ տա, գնա՛, հաց որ թխեցի, արի հաց տար։

Քշում էրթում է, մի քիչ որ մնում է, հ՚ելնում գալում է, որ հաց տանի։ Գալած վախտ ըսում է. «Ես էրթում եմ, ինչրխ անեմ, որ գեվեն ու գոլուկ չէրթան կորին»։

Բերում դևեն նստեցնում է, գոլուկը քիփ կապում է դևի սամիից ու գալում է։ Գալում աշում է, որ խանում հլա թունդիր չէ վառեր, շտապում է թե.— Խանըմ, թեզ արա հաց թխե, որ ես էրթում եմ։

Խանըմ թունդիր վառում է, Աթան էրթում է գոմ, աշում է հոն մի հավկիթ, վերցնում դնում է մահրմի մեջ ու կապում է ճակտին, ու գալում է տուն։

Խանումը հարցնում է թե.— Էդ ի՞նչ է էղեր։

— Քար դիպավ խանըմ, ուռեր է, ես էլ կապեցի։

Խանըմը էրթում է աթար բերե թունդրան։

Աթան հելնում ման է գալում, որ եղ գտնի տանի հանդը ձվածեղ անե։ Եղը գտնում, մի լավ գտալ եղ դնում է արխալըղի փեշ ու գալում տաք թունդրա մոտ նստում է։ Թունդրա տաքությունից եղը հալում թափվում է։

Խանում հարցնում է թե.— Էդ ի՞նչ է։— Հասկնում է, որ եղ է, մե ակիշ գլխին հա կոնե կուտա, հավկիթը կոտրում, թափում է։ Աթան առանց հացի թողնում փախնում է։ Էրթում է հանդը, աշում է, որ դևեն հ'ելեր կայներ է, գոլուկ կախված մնացե, խեղդվեր է։ Ըդտից Աթաբեկ անոթի թողնում փախնում է։ Գալում ճամբին աշում է, որ մեկ ձիավոր ձիուն բառցած գալում է, բեռը քիչ ծռվել է։ Ձիու տեր յալվար է հ'ընկնում թե.— Ախպեր, արի էս բեռը շտկենք ու գնա։

Աթան էրթում աշում է, որ ձիու բեռը գինի է։ Գողտուկ հանում դանակ տալում է բեռը ծակում, բերան դեմ բռնում հ'ուզածի ղատար խմում ու թողնում փախնում, գալում է էդ մարդու գեղ։ Դու մի ասի, էդ մարդն էլ հարսնքի գինի է տանում։

Աթաբեկ անոթի, փորը վեց-վեց է անում, գեղի մոտ մի մարդ ռաստ է գալում, Աթան ըսում է.— Ախպեր ես անոթի եմ, ի՞նչ կոնե հորդ խերին մի կտոր հաց տաս։

— Տո՜, լավ ես էկած, գեղի մեշ հարսնիք կա, գնա հարսնքի տուն կուշտ կեր ու գնա։

Աթան դյուզ քշում էրթում է, մտնում է հարսնատուն, աշում է, որ կերակրի ղազանները շարած են թնռի վրեն, էրթում թնռի կողքին նստում է ու ասում է.— Քալե՛, ես անոթի եմ, ի՞նչ կոնե, հորերուգ խերին քիչ հաց տաք ուտեմ, էրթամ։

— Օղուլ, քիչ սաբր էրա, հիմի մարդիկ թոփ գըլլին, դու էլ կուտես ու կէրթաս։

Աթան նստում է թնռի կողքին իրա համար խաղում է, բռնում դուրբի թելը կապում է թնռի վրայի խաչէրկթի օղից։ Մեկ էլ աշում է, որ մի էրեխա վազեց էկավ տուն։

— Ատե՛, հայրիկս էկավ, ճամբին մի մարդ է պատահե, տիկը պառել է, գինին սաղ թափել է։

Աթաբեկ աշում է, որ գինի թափողը ինքն էր, էկան, իրան պտի բռնեն սպանեն, էլ դուրբի թելն էլ չի հարձկում, հ'ելնում ու փախնում է, խեչրկաթ քաշում է հ'ոտաց հետ, ղազններ թոմար թափում են թունդիր։ Հետևից ճվում են բռնեք հա բռնեք, էլ հ'ուրտեղ կարան բռնել։

Էդ տեղից Աթաբեկ փախնում, էրթում մտնում է, ճամբու վրեն մի շաղաց է էղնում, էն շաղացը։ էրթում մտնում է տեսնի, թե շենլիք կա՞, որ մի քիչ հաց առնի, տեսնում է, որ մարդ չկա, ման է դալում, ըստի ընտի, հ'ելնում մտնում է ամբար, աշում է, որ մի գհոր։ Մտնում է ամբրի մեջ, որ գիշերն էլ հոդ մնա։ Մեկ էլ աշում է,

Աթաբեկ, որ մեջ արջ ներս մտավ, ասում է՝ ես մո՞նց անեմ, որ էս արջի ձեռքից աղատվիմ։ Վեր է առնում դհոլն ու չալում է։ Արջը դհոլի ձեն որ լսում է, թաթեր վերցնում խաղում ու հետ-հետ էրթում, որ դուս հ'ելնի փախնի, պրծնի։ Հետ էրթում դիպնում է դռան, դուռը դրվում է, արջն էլ արթըխ խաղալեն ջաղցի մեջ էրթում, դալում է։ Էդ վախտ ջաղցի մոտով մի ղաթրի քարվան է դալում, որ անցնի, թոմրին չինի ման բառցած, որ տանեն ծախեն։ Գալում հոդ աչում են, որ դումրա դհոլի ձեն է դալում.

— Աճապ էս ջաղցի մեջ հարսնիք է, ինչ է, հլա էրթանք աշենք։

Գալում դուռը բանում են թե չէ, արջը դուս է պրծնում, փախնում է հ'ընկնում ղաթրների մեջ, ղաթրներ խրտնում, բեռները քըցում, ինչքան որ ման կա, թոմար ջարդում են։ Աթաբեկ դուս է հ'ելնում բաշլայում է քուֆր, թե.— Ես Ահմատ փաշի արջը բերեր էի, որ խաղալ սորվեցնեի, դուք դուռը բացիք փախավ, հիմի վեվ կարա ռոնել։ Ես էլ կէրթամ, աղիս գանգատ կոնեմ։

Մոլրում են խեղճեր, բերում քառսուն օսկի ու մի գոլուկ տալում են Աթային, յալվար են հ'ընկնում, որ իր աղին՝ Ահմատ փաշին գանգատ չանե, բոլ էլ հաց են տալում ու թողնում էրթում են։

Աթաբեկ մի վախտ ման է գալում, մի օր էլ գոլուկ հ'առաջ էրթում է մի գեղ, մի տան դուռ կենում է, մի կնիկ է դուս դալում։

Աթան ըսում է.— Մերա', էս գիշեր մի տեղ տա՞ս հորդ խերին մնամ, սաբախտան հ'ելնիմ էրթամ։

— Օնչինչ չի անե, էս մեր չարդախը գոլուկդ էլ կապե, դու էլ մոտ քնի, սաբախտան հ'ելի գնա, դիտե՞ս, որ մարդս էլ ըստե չէ, տուն տղամարդ չկա, հմա օնչինչ չի էղնի։

Աթան տանում չարդխին գոլուկը կապում է, մի քիչ էլ խոտ է դնում հ'առջև, քնելու վախտ էղնում է, աչում է որ մի մարդ էկավ, գնաց տուն, բերին փեշխուն գրին, գաթեն, հավ, խորոված դրին փեշխունի վրեն ու ուտում խմում, քեֆ են անում։ Աթաբեկ հասկըցավ, որ էս մարդ էդ կնկա սիրական է, էլ ձեն չի հանում։

Բիրդան դուռը ծեծում են։ Գալում է կնկա մարդ։ Կնիկը ճարը կռում է, բերում է սիրականին, որ քեհի տղեն է, տանում հ'իջըցնում է հորի մեջ։ Հավը վերցնում դնում է օջխի վրեն, գաթեն էլ փանջարեն ու հ'ելնում, դուռը բանում է։

Մարդը էրթում նստում է.— Կնիկ, ես անոթի եմ, ըսկի ի՞նչ ունես ուտելու։

— Քոռանամ մարդ, ի՞նչ կա, օնչինչ էլ չկա։ Բերում մարդու հ'առաջ դարի հաց է դնում։

Աթան տեսնում է, որ կնիկ գաթա, հավ մարդուն չ՝պտի տա, խոտը վերցնում է գոլուկի հ՝առջևից ու խշխշացնում է։ Էշը ղռում է։ Տան տեր մարդը հարցնում է.— Այ տղա՛, էշդ անոթի՞ է որ ղըռում է։

— Չէ, աղա շան, իմ էշըս ասում է, թե յաղո՞ւզ է գարե հաց ուտում, փանջարին գաթա կա, թող բերե ուտե։

— Վայ, քոռանամ, մարդ, մոռցեր էի,— ու հ՝ելնում գաթեն բերում գնում է մարդու հ՝առաջ։

Աթան էլի խոտը խշխշացնում է, գոլուկը ղըռում է։

— Ա՜յ մարդ, էս հեղ ի՞նչ է ասում գոլուկդ։

— Աղա շան, գոլուկն ասում է, թե օշխի վրեն կարմրցուցած հավ կա, թող աղեն բերե ուտե։

— Վա՜յ, քոռանամ մարդ, մոռցեր էի, միտք մնացե՞ր է որ,— ու հ՝ելնում հավերը բերում, մտքի մեջ տղին քրֆում է։

Քիչ մնում է թե չէ, Աթան էլի խոտը խշխշացնում է թե չէ՝ էշը ղըռում է։

— Ա՜յ տղա՜, էս հեղ քու էշը ի՞նչ է ասում, անոթի՞ է։

— Չէ, աղա ջան, իմ էշը հ՝իմաստուն է, ասում է թե աղեն ճամբուց է էկեր, բեզրեր է, թող մի զազան ջուր տաքցնել տա, լավ լողնա, դինշանա, որ հանգիստ քնի։

— Կնիկ, հ՝ելի օշախը վառե, ղազնով շուր տաքցու, լավ էռցու, որ ես լողնամ։

Կնիկ հ՝ելնում օջախը վառում է, լավ շուր էռացնում է։ Աթան էլի խոտը խշխշացնում է։

— Ա՜յ տղա՛, էշդ ի՞նչ է ասում։

— Աղա ջան, իմ էշը ասում է, որ հորի վրեն էրթա աղեն լողանա։

Կնիկը կոսե.— Այ ջանըմ էդ մարդը խելառ է, ըշտը տաշտը բերեմ մեջ լողցի էլի։

— Չէ, էդ էշը հ՝իմաստուն է, ես էդ իշու խոսքը պտի անեմ, անկարելի է։

Ջուրը բերում են հորի մոտ, էլի խոտը խշխշացնում է.

— Էս հեղ ի՞նչ է ասում քու էշը, ա՛յ տղա։

— Իմ էշս, աղա շան, ասում է թե՝ թող աղեն չլողնա, էգ էփման ջուր, էդպես լցնե հորի մեջ։

Կնիկն ասում է.— Ա՛յ մարդ, էդ տղեն խելառ է, ասսու սիրուն, դու չի՞ համար ես էդոր խոսքին լսում, ըշտը նստիր, քեզի լողացնեմ։

— Չէ, անկարելի է, էդ էշը հ՝իմաստուն է, ես էդոր խոսքից

պտի չհ՚ելնիմ։— Ու բռնում ղազնով ջուրը մեկեն կործում է հո-
րի մեջ։ Քահի տղեն էնենց մի ձեն է հանում, որ մարդը շիվարում
մնում է։ Աթաբեկը հմա չարդըխից վազում գալում է։

— Ա՜յ, քու հերդ անիծած, դու էդ մարդուն յաղո՞ւզ սպանեցիր, յավաշ ես էրթամ քահին հ՚իմաց տամ, դու հ՚ուր պտի պրծնիս։

Էդ մարդն էլ չի կարա խոսի, անձեն, մտածում է թե. «Ես էս ինչ էր արի»։

— Ախպեր ջան, ի՞նչ կտաս ընձի, որ ես գիշեր էդ մարդուն տանիմ կորցնեմ։

— Ամա՜ն, քու բախտդ եմ, ինչ հ՚ուզում ես առ, թաք ընձի ազատե։

Բերում մի քանի օսկի էլ փարա է տալում Աթային, Աթաբեկը հանում գիշերով մեռած մարդու ջանդակը էնենց է սարքում իշու վրեն, ինչրխ որ սաղ մարդ հեծած ու քշում էրթում է։ Լուսանում, էրթում մի բահեզի մոտեն անցնում է, էրթում բահեզից խիար է առնում։ Մեկ խիար, դանակն էլ հետ տալում է մեռածի ձեռն ու քշում էրթում է։

Մոտենում է մի գեղի, աշում է, որ մի կալի ցորեն թեճ են արե, մոտ մարդ էլ չկա։ Աթան պահվում է, էշը շտկում է դիպա կալի շեղջը։ Էշը դյուզ էրթում կայնում է շեղջի վրեն ու ուտում է, աշում է, որ մեկը էն կողմեն ճվում է.— Ախպեր, էշդ մի թողնի, ցորենը կերավ, տո քոփակ օղլի քո՞ռ ես, չես տեսնում, խուլ է, քոռ է էդ իթողլիթը, հեչ տերը չի էղնում։

Կալի տերը ճվում, ճվում, աշում է, որ էդ մարդը տեր չի էղնում, վերցնում հեռվից մե քար է քցում, դիպնում է մարդուն, իշու վրայից վեր հ՚ընկնում, խիարն ու դանակը թռնում ձեռքից, հ՚ընկնում է հեռու։ Կալի տերը չվարում մնում է, թե. «Վա՜յ, ես էս ինչ բան էր արի»։

Էն կողմից Աթան, թաքնված տեղից հ՚ելնում.— Վա՜յ քու հերդ անիծած, դու իմ ախպորս սպանեցիր, մի բուռ ցորենի համար է՞լ մարդ սպանեն, քեզի ինչքան որ վնաս էր էղած, քու վնասդ առնեիր մեկին տաս։ Ես գանգատ եմ էրթում, իմ ախպոր արունքը ձեզնից հ՚ուզում։

Գեղացիք թոփ են էղնում, գալում են, յալվար, յախար, Աթաբեկին թե.— Արի մի աներ, ինչ գանգատ, վնաս է եղեր է, մենք գեղի մեջ յոլա կը տանինք։

Կանչում բերում են ցորնի տիրոջ, իրանց մեջով որոշում են, որ էդ մարդու արնի տեղ ցորեն տան։ Բերում որոշում են, որ քսան

բեռ ցորեն իրանց եզներով բառնան տանին էդ մարդու տուն, դարտըկեն, դառնան դան։

Էրկու կողմն էլ համոզվում են, բերում մեռած տղին թաղում են էդ դեղ։ Բառնում են Աթաբեկի ցորեններ ու քշում դալում են Խար։

Գալում, գեղ որ հասնում են, խաբեցիք հ'իմանում են, թուփ են էղնում, գալում են թե. «Արեք, որ Աթաբեկը էկեր է»։ Գեղացիք հ'իրար ձեն են տալում թե.— Գյուրշիկենց Աթաբեկին հեր տնից ծեծեց վռնդեց, երեք չորս ամսվա մեջ էսքան բան է բերել։

Աթաբեկը միտքը դառցնում է, որ էդ եզներից մի քանիսն էլ ետ առնի, որ վար ու ցան անե։ Էդ մարդկանց եզների միջեն մի վեց, օխտը հատ լավ եզ է ջոկում ու ասում.— Ցա էս եզներն էլ կտաք ընձի, յա թե չէ, գանգատ կ'տամ։

Էդ մարդիկ յալվար են անում թե՝ էդ եզներն էլ քեզի էղնի, թաք գանգատ մի անե։

Էդ մարդիկ հ'ելնում առնում են մեկել եզներն ու էրթում են։ Ընտից հետև էլ իրա համար բաշլայում է վար ու ցան։

Խելար Աթաբեկը իր խելրութունով ահագին հարստութուն է բերում հորը։